ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 180 - Ա 17 մարտի 2022 թ.

ՄԱՐԻԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Մարիամ Հարությունյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1"Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Արծվանիստի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Մարիամ Հարությունյանին տրամադրել չվճարվող արձակուրդ 2022 թվականի մարտի 21-ից մարտի 23-ը ներառյալ:

2" Մարիամ Հարությունյանի չվճարվող արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Արծվանիստի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ծովինարի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության ընտանեկան բժիշկ Շիրակ Մելքոնյանին:

17.03.2022

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք.Գավառ